# ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

## ԵՐԿԱԹ ԵՐԿԵՐ

«Արվեստագետի գլխավոր թեման մարդն է»,- նշում էր Հակոբ Հակոբյանը: Սա է այն հիմնական ստեղծագործական սկզբունքը, որը տասնամյակներ շարունակ առաջնորդել է նկարիչ Հակոբ Հակոբյանին իր աշխատանքներում: Փաստորեն, արվեստագետի կոչումը արարչագործությունն է, «նոր էակի» ստեղծումը: Եվ թեև Հակոբյանի շատ աշխատանքներում արարածի ներկայությունը հասնում է ոգեղեն մակարդակի, դիտողը ակամայից հաղորդակից է դառնում հակոբյանական աներևույթ էակներին, որոնք կենդանանում են մանեկենների, հագուստների, առօրյա գործիքների մեջ: Մարդացած առարկաները դառնում են Հակոբյանի կտավների մարդ-հերոսները, ինչպես նկարիչն ինքն է անվանում՝ «բնակիչները»՝ իրենց բնորոշ հույզերով և տրամադրությամբ, պատմությամբ: Սակայն այդ հերոսներից մի տեսակին վիճակված էր առանձնանալ կտավից, ապրել ինքնուրույն կյանքով:

Աշխատանքային գործիքների մարդակերպ և կենդանակերպ համադրումները, որոնք ի սկզբանե ստեղծվել էին որպես կտավների նոր բնակիչների նախակերպեր, աստիճանաբար սկսեցին ընկալվել որպես առանձին քանդակներ: Հարթաշուրթերի, աքցանների, մկրատների, բժշկական գործիքների տարատեսակ համակցումները ծնունդ տվեցին հակոբյանական նոր արարածներին: Առօրյա գործիքների հորինվածքային եզակի լուծումներով քանդակները առանձնանում են ինքնատիպ կերպարներով, իրենց ներքին դինամիկայով, նուրբ հումորային զգացողությամբ: Այդ քանդակներում կանացի և տղամարդու ֆիգուրները, առասպելական կենդանիները և թռչունները կերպարանափոխվում են, հանդես գալիս տարբեր իրավիճակներում. երկաթե քանդակները Հակոբյանի նոր երկերն են մարդու և նրա ներաշխարհի, բնության, սիրո և պայքարի մասին:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնում կազմակերպված «Հակոբ Հակոբյան. երկաթե երկեր» ցուցադրությունն առաջին անգամ երևան է հանում քանդակի՝ որպես առանձին գեղարվեստական ուղղության զարգացումը Հակոբյանի արվեստում՝ կրկին անգամ հաստատելով Վարպետի ստեղծագործական հարուստ երևակայությունը և նորարարությունը: Այն ներկայացնում է քանդակների լայն ընտրանի ստեղծագործական բոլոր շարքերից. մարդակերպ և կենդանակերպ ֆիգուրներ, թեմատիկ աշխատանքներ, ինչպես օրինակ, «Առյուծ Մհեր» (*նկար N 42*), «Սիրահետում» (*նկար N 19*), «Հեթանոս աստված» (*նկար N 43*)[1]: Ցուցադրության մեջ ընդգրկված չորս գեղանկարները՝ գործիքների հստակ պատկերագրությամբ, ներկայանում են որպես քանդակների երկչափ մետաֆորներ:

Արվեստագետի երազանքն էր ստեղծել քանդակների բրոնզաձույլ մեծադիր հորինվածքները, որոնք նորովի կարտահայտեն առօրյա գործիքների ծավալային համադրումների քանդակային ուժը՝ վերարժևորելով Հակոբ Հակոբյանի՝ հայ մշակույթում և համաշխարհային արվեստում ունեցած անգնահատելի ներդրումը:

**Աստղիկ Մարաբյան**, *արվեստաբան*
*Հանրային ծրագրերի գծով փոխտնօրեն*
*Գաֆէսճեան արվեստի կենտրոն*

1 *Ցուցահանդեսում ընդգրկված աշխատանքներից զատ, սույն կատալոգում ներկայացվել են նաև արվեստագետի այլ քանդակների ընտրանի:*

*Վիրուաներ*
2003
Կտավ, յուղաներկ
100 x 73 սմ

*Համբույր*
2011
Կտավ, յուղաներկ
100 x 80 սմ

*Առյուծ Մեր*
2008
Կտավ, յուղաներկ
100 x 81 սմ

*Նատյուրմորտ աքցաններով*
1980
Կտավ, յուղաներկ
60 x 92 սմ

1.
*Սիրահարներ*
2005-2010
Պողպատ
32 x 9 x 7 սմ

2.
*Հաղթողը*
2005-2010
Պողպատ
30 x 21 x 16 սմ

3.
*Պայքար*
1980-ական թթ.
Պողպատ
44,5 x 26,5 x 13,5 սմ

4.
*Հարձակում*
2005-2010
Պողպատ
45,5 x 27 x 8 սմ

14.
*Համբույր*
2005-2010
Պողպատ
38 x 16 x 10 սմ

16.
*Երկվորյակներ*
2005-2010
Պողպատ
27 x 13,5 x 8 սմ

28.
*Դահիճ*
2005-2010
Պողպատ
32,5 x 13 x 10,5 սմ

34.
*Ֆիգուր*
2005-2010
Պողպատ
41 x 20,5 x 6 սմ

54.
*Ֆիգուր*
2005-2010
Պողպատ
47 x 12,5 x 8 սմ

84.
*Թռչուն*
2011-2012
Պողպատ
45 x 24 x 8 սմ